ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

թիվ 366-16
26 հոկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 43-ից N 46 որոշումները:

Առդիր՝ վեց թերթ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար *Ա. Տիտանյան*

Կատարող՝ Վ. Ձավարյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2016 թվական, N 43-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի վեցերորդ պարբերության, 12-րդ, 12[1] և 14-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի տասնմեկերորդ հերթական նիստի օրակարգը.

1) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0037-0045 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 33-Ա ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԵՏԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՆԹԱԿԵՏԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., հոկտեմբերի 26
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2016 թվական, N 44-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը, քաղաքացիներ Հրաչյա Խեչումյանի, Արտաշես Մոսինյանի, Մանվել Աղիկյանի Արամ Դավիթավյանի նկատմամբ սահմանել գույքահարկի գծով իսկ քաղաքացիներ Սիրվարդ Բարսեղյանի, Գևորգ Ջանինյանի և Աղասի Վարդանյանի նկատմամբ հողի հարկի գծով արտոնություններ հետևյալ չափերով.

1) Հրաչյա Կառլենի Խեչումյան (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 1, տուն 68/2, ՀՎՀՀ S0250182) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկի ապառքից՝ 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ գումարի չափով.

2) Արտաշես Արմենակի Մոսինյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 8, տուն 58, ՀՎՀՀ 13574181) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2014 և 2015 թվականների գույքահարկի տուժերից՝ 7. 357 (յոթ հազար երեք հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ գումարի չափով.

3) Մանվել Սուրիկի Աղիկյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 14, փակուղի 1, տուն 3, ՀՎՀՀ 13810462) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2015 և 2016 թվականների գույքահարկի ապառքներից՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ գումարի չափով և 2015 թվականի գույքահարկի տույժից՝ 4 440 (չորս հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումարի չափով.

4) Արամ Ղարիբի Դավիթավյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 14, նրբանցք 1, տուն 5, ՀՎՀՀ 13792518) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկից ամբողջությամբ՝ 35 500 (երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով.

5) Սիրվարդ Հովհաննեսի Բարսեղյանին (հասցե գ. Օձուն, փողոց 14, փակուղի 1, տուն 5, ՀՎՀՀ S025044) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասերի (վարելահող, խոտհարք, տնամերձ) հողի հարկի 2014 և 2015 թվականների ապառքներից՝ 10 335 (տաս հազար երեք հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ գումարի չափով և 2014 և 2015 թվականների հողի հարկի տույժերից՝ 6 156 (վեց հազար մեկ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ գումարի չափով.

6) Գևորգ Գրիգորի Ջանինյանին (հասցե գ. Օձուն, փողոց 8, շենք 9, բնակարան 14, ՀՎՀՀ 13675412) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասերի (վարելահող, խոտհարք) հողի հարկի 2013-2017 թվականների ապառքներից՝ 21 684 (քսանմեկ հազար վեց հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով և 2013-2016 թվականների հողի հարկի տույժերից՝ 7 988 (յոթ հազար ինն հարյուր ութսունութ) ՀՀ դրամ գումարի չափով.

7) Աղասի Գուրգենի Վարդանյանին (հասցե գ. Օձուն, փողոց 4, նրբանցք 2, տուն 4, ՀՎՀՀ 13595954) ազատել համասեփականության իրավունքով իրեն պատկանող 06-112-0431-0046 կադաստրային ծածկագրով 0.9737 հեկտար մակերեսով հողի հարկի 2008-2016 թվականների տույժերից՝ 22 724 (քսաներկու հազար յոթ հարյուր քսանչորս) ՀՀ դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., հոկտեմբերի 26
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2016 թվական, N 45-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0037-0045 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, 47-րդ և 51-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 63-րդ հոդվածի և 67-րդ, հոդվածի,

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

Հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, N 5/16 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0037-0045 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության 0.00279 հեկտար մակերեսով հողամասը, կառուցապատման նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել տասնհինգ հազար (15 000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար մեկ հազար (1 000) ՀՀ դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման

գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին կետով սահմանված հողամասի աճուրդը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., հոկտեմբերի 26
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2016 թվական, N 46-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 33-Ա ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԵՏԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՆԹԱԿԵՏԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի առաջին մասի չորրորդ կետի, 75-րդ հոդվածի առաջին մասի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 31-ի N 33-Ա որոշման առաջին կետի չորրորդ ենթակետը դեռևս չի կիրառվել և աննպատակահարմար է կիրառել և հաշվի առնելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 31-ի «ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 33-Ա որոշման առաջին կետի չորրորդ ենթակետը ճանաչել չեղյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., հոկտեմբերի 26
Գ. Օձուն